1270

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

« 13 » 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0076-22

Ձեռնարկողը՝ «ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Արմաշ Հարյան 2

Գործունեությունը՝ **Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինի «ԱՐԼՅՈՒ» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Արարատի մարզ,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0076-22
<13> 06 2022թ.

Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինի «Արյու» տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, բն. Գոռավան

Ներածական մաս. Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների «Արյու» տեղամասում «ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի դ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Ընկերությա կողմից ընդերքօգտագործման նպատակով հայցվող տեղամասը գտնվում է Արարատի մարզում Վեդի խոշորացված համայնքի Գոռավան բնակավայրի վարչական սահմաններում՝ 959-979մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասը Վեդի համայնքի և Գոռավան բնակավայրի բնակելի տարածքներից գտնվում է համապատասխանաբար՝ 1.89կմ և 1.45 կմ հեռավորությունների վրա: Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության, գործառնական նշանակության՝ «այլ» հողատեսքերով, իսկ ջարդիչ կայանը զբաղեցնող հաղատարածքը ներկայացված է արդյունաբերական, ընդերքօգտագործման նշանակության հողատեսքերով: Հայցվող տեղամասը «Գոռավանի ավազուտներ» արգելավայրից գտնվում է 250մ, իսկ պահպանական գոտուց 150մ հեռավորությունների վրա:

Տարածքի հարևանությամբ ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքներ են /առկա են բացահանքեր, արտադրական հրապարակներ, լցակույտեր և ենթակառուցվածքներ/: Բուն տեղամասում հողաբուսական շերտը բացակայում է, մինչև 1.1մ խորությամբ տարածվում են խիստ ճեղքավորված, հողմահարված տրավերտինները:

Հանքավայրի «Արյու» տեղամասի օգտակար հաստաշերտի պաշարները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության 2007 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 145 որոշմամբ: Թույլատրվել է քարամշակման ոլորտի համար հաստատված պաշարների օգտագործումը ԳՈՍՏ 9479-98-ին համապատասխան երեսապատման քարի արդյունահանման համար՝ բլոկների 55% միջին ելքով: «Արյու» տեղամասի օգտակար հանածոն ներկայացված է գորշավուն, սպիտակադեղնավուն և դեղնագորշավուն տարատեսակներով: Տեղամասի սահմաններում հետազոտված երեսապատման տրավերտինների պաշարները, ինչպես նաև տրավերտինների հանքավայրում առկա հողմահարված տրավերտինները (փուշտա շերտ) պիտանի են սովորական գետնաստի

արտադրության համար և որպես ցեմենտի հումք գնահատված են C_2 կարգով:

Նկարագրական մաս. Ընկերության կողմից հայցվող տեղամասի /որը զբաղեցնում է 3,2հա/ ծայրակետային կոորդինատները Arm WGS-84 համակարգով հետևյալն են.

1. 4417194.6466, 8476129.8619
2. 4417193.0818, 8476252.6609
3. 4417034.8696, 8476212.9248
4. 4417028.6305, 8476051.7742
5. 4417073.8511, 8475963.7686

Համաձայն նախագծի բացահանքի սահմաններում՝ 3,2հա տարածքում, թարմ տրավերտինների հաշվեկշռային պաշարների ծավալը կազմում է 297600մ^3, իսկ արդյունաբերական պաշարներինը՝ 277950մ^3: Բացահանքի շահագործման ժամկետն ընունվել է 19 տարի: Տարեկան արտադրողականությունն ըստ արդյունահանման կազմում է 15000մ^3 թարմ տրավերտինների արդյունաբերական պաշար: Բացահանքը նախագծված է երեսապատման իրերի բլոկների արդյունահանման համար:

Օգտակար հաստվածքը ներկայացնող տրավերտինները ծածկոցի տեսքով տեղադրված են կավերի և ավազների վրա: Թարմ, չհողմահարված տրավերտինների հզորությունը տեղամասի տատանվում է 8.0-ից 12.8մ-ի սահմաններում, իսկ հողմահարված և խիստ ճեղքավորված տրավերտինների հզորությունը տատանվում է 1.0-4.0մ-ի սահմաններում, կազմելով միջինը 2.09մ: Տրավերտինային ծածկույթի մակերեսը զուրկ է հողաբուսական շերտից:

Տեղանքի ռելիեֆը, տեղամասի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները նպաստավոր են հանքավայրի շահագործումն իրականացնել բաց լեռնային եղանակով՝ առանց հորոտապայթեցման աշխատանքների:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- առավելագույն երկարություն - 240մ;
- առավելագույն լայնություն - 164մ;
- մշակման խորություն - 20մ:
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը - 326723մ^3 որից՝

- թարմ տրավերտիններ - 297600մ^3;
- հողմահարված տրավերտին (ցեմենտի հումք) - 29123մ^3,

- օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների քանակը - 305150մ^3, որից՝

- թարմ տրավերտիններ (արդյունաբերական պաշարներ) - 277950մ^3,
- հողմահարված տրավերտին (ցեմենտի հումք)- 27200մ^3:

Բացահանքը շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները.

1. Բացահանքի հյուսիս-արևելյան մասով անցնող գրունտային ավտոճանապարհից դեպի 970մ նիշ ունեցող հորիզոն մուտքային ճանապարհի կարգաբերում /L=170մ, b=7-8մ, V=680մ^3/:
2. 970մ նիշ ունեցող հանքաստիճանից ապարների մշակում և հեռացում- 1850մ^3 ծավալով, որից՝ թարմ տրավերտինների զանգված - 1100մ^3:
3. Արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 250մ^3 ծավալով:

Նշված աշխատանքների տևողությունը կկազմի 0,55 տարի: Բլոկների բարձումն իրականացվում է թրթռային կռունկի միջոցով: Հողմնահարված տրավերտինները և հանույթից առաջացած տրավերտինների ջարդոնները պիտանի են ցեմենտի արտադրության համար, ուստի բուլդոզերով հեռացվելու են մշակվող հորիզոնում

կուտակելու համար, այնուհետև ավտոինքնաթափով տեղափոխվում են ջարդիչ տեսակավորող կայանք, որը տեղադրված է ենթակառուցվածքների տեղակայման նպատակով ընկերության կողմից հայցվող տեղամասի տարածքում և լրացուցիչ հողերի օտարում չի պահանջվում:

Տրավերտինների հանույթի հատումները հորիզոնական ուղղությամբ կատարվելու է «Виктория» մակնիշի ներհատ՝ կտրիչաշղթայավոր քարհատ մեքենայի միջոցով, իսկ ուղղաձիգ հատումները՝ «Надежда-2» մակնիշի ալմաստաճոպանային քարհատ մեքենայով: Քարհատ մեքենայի ճոպանը թելելու համար անհրաժեշտ ուղղաձիգ հորատանցքերի հորատումը նախատեսված է <Камея> մակնիշի հորատման հաստոցի միջոցով: Հանքաստիճանների մարման ժամանակ Օգտակար հաստաշերտի մշակումը կատարվում են բուլդոզեր /Т-170/, էքսկավատոր /VOLVO EC 360CL/, ավտոինքնաթափ /КрАЗ-256Б/ լեռնատրանսպորտային համալիրով:

Տրավերտինների հաստաշերտի մշակման ժամանակ բլոկների արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել բարձրաստիճան միակողանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով, որի համար ընդունված տարրերն են.

- հանքաստիճանի բարձրություն՝ 5մ:
- պահպանիչ բերմայի լայնություն՝ 2մ:
- կողի թեքման անկյունը - 68°:
- ընթացքաշերտի լայնությունը - 3,0մ;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնություն - 20մ:

Հանքավայրում օգտակար հաստվածքը ծածկող հողաբուսական շերտի ապարները բացակայում են: Լցակույտ առաջացնող ներքին մակաբացման ապարները /ընդերքօգտագործման թափոններ/՝ 30625մ^3 ընդհանուր ծավալով, ներկայացված են հիմնատակող ապարներով (կավերով և հրաբխային ավազներով): Այս ապարները՝ մինչև 960մ նիշ ունեցող հանքաստիճանի շահագործումը, 13125մ^3 ծավալով նախատեսվում է ժամանակավոր պահեստավորել բացահանքի հարավ-արևմտյան մասում, այնուհետև լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի նպատակով բացահանքի շահագործմանը զուգահեռ արտաքին լցակույտից ատիճանաբար կտեղափոխվեն մշակված տարածություն, որտեղ փռվում և հարթեցվում են: Լցակույտառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով: Ժամանակավոր արտաքին լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0.97հա:

Բացահանքի տեխնիկական ջրամատակարարումը նախատեսված է տրավերտինի կտրման աշխատանքների ժամանակ փոշեկանխման (ճոպանային սղոցի և ճոպանը աշխատանքի ընթացքում սառեցնելու և առաջացած փոշին կլանելու ու տեղափոխելու համար) և աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի մակերեսների ջրման նպատակով: Ընդհանուր՝ 3600մ^2 մակերեսով տարածքների /աշխատանքային հրապարակ, լցակույտեր, ավտոճանապարհներ/ ջրցանման համար տարեկան ջրածախսը /չոր և շոգ օրերին՝ օրեկան 2 անգամ/ կկազմի 432մ^{3}լիտր:

Տեխնիկական ջրի ծախսը ճոպանային սղոցի աշխատանքների համար հաշվարկվել է 424մ^3/տարի, որի համար նախատեսվում է 30.0մ^3 տարողությամբ ջրի ցիստեռն: Ճոպանները սառեցնող ջրերը ջրհեռացնող առվակի միջոցով թափվում են տիղմազտիչ հորի մեջ, որտեղ փոշին հորի հատակում նստելուց (շլամ) հետո մաքրված ջուրը կրկին օգտագործվում է տեխնիկական նպատակների համար:

Աշխատողների համար խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվել է 91.0մ^3/տարի /կամ միջին օրեկան՝ 0.455մ^3/: Կենցաղային կեղտաջրերը /0.387մ^3 օրեկան ծավալով/ կլցվեն բետոնային լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար կհեռացվեն: Բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում, անմիջապես

COMMISSION OF EXPERTS

տարածքը թափվող անձրևային ջրերը ինքնահոս կերպով կհեռացվեն և կներծծվեն ճաքերի միջով:
Արդյունահանման աշխատանքների համար տեխնիկական նպատակով ջրառն իրականացվելու է Արմաշ համայնքում գործող խորքային հորից (ջրառի ծավալը՝ 3.63 լիտր/վրկ) «Մոդուս Գրանում» ՍՊ ընկերությանը տրամադրված ջրօգտագործման թույլտվության համաձայն: Խմելու ջրամատակարարումը՝ ինչպես ներկայում, իրականացվում է պայմանագրային հիմունքներով՝ բերովի ջրով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներով և արտահայտվում է փոշու և ծխագազերի առաջացմամբ և ջարդիչ կայանքի աշխատանքով: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է արտանետվող վնասակար նյութերի գումարային հաշվարկներ՝ բացահանքի և ջարդիչ-տեսակավորող կայանքի աշխատանքի համար: Իրականացվել են գումարային արտանետումների ցրման հաշվարկներ համակարգչային եղանակով, համաձայն որոնց արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակը ցածր է եղել թույլատրելի նորմերից: Լեռնային աշխատանքներից բացահանքի տարածքում առաջանում է 1.082տ/տարի անօրգանական փոշի, իսկ СМД-109А այտավոր ջարդիչով տրավերտինների թափոնների և մակաբացման ապարների վերամշակումից՝ 19.44տ/տարի:

Բացահանքում արդյունահանման աշխատանքների և ջարդիչ կայանքի աշխատանքի արդյունքում մթնոլորտային օդին հասցվող վնասը գնահատվել է ընդհանուր՝ 3028.35 հազ.ՀՀ դրամ: Հողային ռեսուրսներին հասցվող տնտեսական վնասը հաշվարկվել է 5574.5հազ.դրամ /բացահանքի 3.2հա տարածքի և արտաքին լցակույտի՝ 0.97հա տարածքի համար/:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից (Գոռավան բնակավայրի հեռավորությունը աղմուկի աղբյուրից 1.4կմ է) աղմուկի գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի մոտ հաշվարկվել է 40ԴԲԱ, ինչը բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ ցածր է:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Խախտված հողերի ռեկուլտիվացիայի նպատակով ժամանակավոր արտաքին լցակույտում պահեստավորված՝ 13125մ³ մակաբացման փխրուն ապարները և ներքին լցակույտում պահեստավորված՝ 17500մ³ ապարները կտեղափոխվեն մշակված տարածություն, որտեղ կփռվեն և կհարթեցվեն: Այնուհետև, հարթեցումից հետո փխրուն ապարները կպարարտացվեն բնական օրգանական պարարտանյութերով և կիրականացվի տարածքին բնորոշ կիսաանապատային բուսատեսակներով (օշինդր, անապատասեզ, ցորնուկ) սերմերի ցանք: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը բացահանքի համար կազմում է 2.93հա, իսկ արտաքին լցակույտի համար՝ 0.97հա: Բացահանքի մշակված տարածության ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 2750.0 հազ.ՀՀ դրամ, ինչը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով: Շահագործման ընթացքում արտադրական տարածքը նախատեսվում է կանաչապատել թփերով և գաճաճ ծառատեսակներով:

Ընկերության կողմից արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսերը կազմում է 840.0 ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Արարատի մարզի Գոռավան բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում բնակավայրերից աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական

միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նորմերի, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել Գոռավան բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան կազմել հանքի փակման վերջնական ծրագիր և ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

5. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/ և դրանց իրականացման ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ» ՍՊԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինի «Արյու» տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան